Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-234-22.12.2017-ՏՏԳԲ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի ապրիլի 11-ի ՀՕ-82-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք)

ամբողջ տեքստում «բնապահպանական պետական տեսչություն» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել համապատասխանաբար «բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին» բառերով և դրանց հոլովաձևերով:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի.

1) 1-ին մասի 1-ին պարբերության «բնապահպանական վերահսկողություն» հասկացությունից հանել «(բացառությամբ ընդերքօգտագործման *համար*)» բառերը,

2) 2-րդ պարբերությունում «լիազորված պետական մարմնի ստորաբաժանում» բառերը փոխարինել «մարմին» բառով:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածում «բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին)» բառերը փոխարինել «բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը» բառերով:

Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասից հանել «հանրապետական» բառը:

Հոդված 6. Օրենքի 3-րդ գլխի վերնագրից հանել «պաշտոնների դասակարգումը» բառերը:

Հոդված 7. Օրենքի 11-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «և լիազոր մարմնի սահմանած մեթոդական ցուցումներով ու հրահանգներով» բառերը:

Հոդված 9. Օրենքի 16-րդ հոդվածը շարադրել հետևյալ *խմբագրությամբ*.

«Բնապահպանական պետական տեսուչի համազգեստի ձևը և այն կրելու կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 10. Օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասում «լիազոր մարմնի ղեկավարին ու Հայաստանի Հանրապետության բնապահպանական գլխավոր պետական տեսուչին, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանական գլխավոր պետական տեսուչի տեղակալին» բառերը փոխարինել «բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարին, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրա տեղակալին» *բառերով*:

Հոդված 11. Օրենքի 22-րդ հոդվածի *1-ին մասի* 9-րդ կետի *«ա» ենթակետից հանել «(բացառությամբ ընդերքօգտագործերի)» և «բ» ենթակետերից հանել «(բացառությամբ ընդերքօգտագործման)» բառերը*:

Հոդված 12. Օրենքի 24-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «լիազոր մարմնի ղեկավարի» բառերը փոխարինել «բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կառավարման խորհրդի» բառերով, իսկ «և լիազոր մարմնի ու» բառերը փոխարինել «բնապահպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ու» բառերով.

2) 2-րդ մասում «ստուգում իրականացնելու մասին հրամանը տալիս է լիազոր մարմնի ղեկավարը, իսկ հանձնարարագիրը՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանական գլխավոր պետական տեսուչը կամ նրա հանձնարարությամբ՝ տարածքային բնապահպանական ավագ պետական տեսուչը» բառերը փոխարինել

«ստուգում իրականացնելու վերաբերյալ հրամանը կամ հանձնարարագիրը տալիս է բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը» բառերով.

3) 3-րդ մասում «լիազոր մարմնի» բառերը փոխարինել «բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարի» բառերով:

Հոդված 13. Օրենքի 25-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Առանձնահատուկ դեպքերում ստուգումն անցկացվում է բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարի հրամանով կամ հանձնարարագրով:»

2) 8-րդ մասում «հրահանգը հաստատում է լիազոր մարմնի ղեկավարը» բառերը փոխարինել «կարգը հաստատում է բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը» բառերով:

Հոդված 14. Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասում «բնապահպանական գլխավոր պետական տեսուչը կամ նրա հանձնարարությամբ տարածքային բնապահպանական ավագ պետական տեսուչը» բառերը փոխարինել «բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը կամ նրա հանձնարարությամբ տարածքային բնապահպանության տեսուչը» բառերով:

Հոդված 15. Օրենքի 27-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ, ինչպես նաև սույն հոդվածով սահմանված որոշումներ (այսուհետ՝ որոշումներ) կայացնելու իրավասություն ունեն Հայաստանի Հանրապետության բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը, բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանման ղեկավարը՝ տեսչական մարմնի ղեկավարի սահմանած դեպքերում և կարգով:».

2) 7-րդ մասում «սահմանում է լիազոր մարմնի ղեկավարը» բառերը փոխարինել «հաստատում է բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը» բառերով:

Հոդված 16. Օրենքի 28-րդ հոդվածի3-րդ մասի 7-րդ կետում «լիազոր մարմնի ղեկավարը» և «Հայաստանի Հանրապետության բնապահպանական գլխավոր պետական տեսուչը» բառերը փոխարինել «բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը» բառերով, իսկ 4-րդ մասում «լիազոր» բառը փոխարինել ?բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական? բառերով :

Հոդված 17. Օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասում «լիազոր մարմնի ղեկավարը» բառերը փոխարինել «բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը» բառերով:

Հոդված 18. Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասում «լիազոր մարմինը» բառերը փոխարինել «բնապահպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը» բառերով:

Հոդված 19. Օրենքի 31-րդ հոդվածի՝

1) 1-ին և 2-րդ մասերի «ա» կետերն ուժը կորցրած ճանաչել.

2) 1-ին և 2-րդ մասերի «գ» կետերը «կենսառեսուրսների» բառից հետո լրացնել «, օգտակար հանածոների» բառերով:

Հոդված 20. Օրենքի 32-րդ հոդվածի.

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի տեսուչի գործողությունները կարող են բողոքարկել «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»,

2) 3-րդ և 4-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 21. Օրենքի 35-րդ և 36-րդ հոդվածների 4-րդ մասերում «լիազոր մարմնի» բառերը փոխարինել «բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի» բառերով:

Հոդված 22. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Առաջին ընթերցում

Կ-234-22.12.2017-ՏՏԳԲ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի ապրիլի 11-ի ՀՕ-82-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք)

ամբողջ տեքստում «բնապահպանական պետական տեսչություն» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել համապատասխանաբար «բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին» բառերով և դրանց հոլովաձևերով:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի.

1) 1-ին մասի 1-ին պարբերության «բնապահպանական վերահսկողություն» հասկացությունից հանել «(բացառությամբ ընդերքօգտագործման համար)» բառերը,

2) 2-րդ պարբերությունում «լիազորված պետական մարմնի ստորաբաժանում» բառերը փոխարինել «մարմին» բառով:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածում «բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին)» բառերը փոխարինել «բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը» բառերով:

Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասից հանել «հանրապետական» բառը:

Հոդված 6. Օրենքի 3-րդ գլխի վերնագրից հանել «պաշտոնների դասակարգումը» բառերը:

Հոդված 7. Օրենքի 11-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «և լիազոր մարմնի սահմանած մեթոդական ցուցումներով ու հրահանգներով» բառերը:

Հոդված 9. Օրենքի 16-րդ հոդվածը շարադրել հետևյալ~~՝ բովանդակությամբ~~ խմբագրությամբ.

«Բնապահպանական պետական տեսուչի համազգեստի ձևը և այն կրելու կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 10. Օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասում «լիազոր մարմնի ղեկավարին ու Հայաստանի Հանրապետության բնապահպանական գլխավոր պետական տեսուչին, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանական գլխավոր պետական տեսուչի տեղակալին» բառերը փոխարինել «բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարին, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրա տեղակալին» բառերով:

Հոդված 11. Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի~~ «ա» և «բ» ենթակետերից հանել «(բացառությամբ ընդերքօգտագործման վճար հանդիսացող բնօգտագործման վճարների)» բառերը~~«ա» ենթակետից հանել «(բացառությամբ ընդերքօգտագործերի)» և «բ» ենթակետերից հանել «(բացառությամբ ընդերքօգտագործման)» բառերը:

:

Հոդված 12. Օրենքի 24-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «լիազոր մարմնի ղեկավարի» բառերը փոխարինել «բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կառավարման խորհրդի» բառերով, իսկ «և լիազոր մարմնի ու» բառերը փոխարինել «բնապահպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ու» բառերով.

2) 2-րդ մասում «ստուգում իրականացնելու մասին հրամանը տալիս է լիազոր մարմնի ղեկավարը, իսկ հանձնարարագիրը՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանական գլխավոր պետական տեսուչը կամ նրա հանձնարարությամբ՝ տարածքային բնապահպանական ավագ պետական տեսուչը» բառերը փոխարինել «ստուգում իրականացնելու վերաբերյալ հրամանը կամ հանձնարարագիրը տալիս է բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը» բառերով.

3) 3-րդ մասում «լիազոր մարմնի» բառերը փոխարինել «բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարի» բառերով:

Հոդված 13. Օրենքի 25-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Առանձնահատուկ դեպքերում ստուգումն անցկացվում է բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարի հրամանով կամ հանձնարարագրով:»

2) 8-րդ մասում «հրահանգը հաստատում է լիազոր մարմնի ղեկավարը» բառերը փոխարինել «կարգը հաստատում է բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը» բառերով:

Հոդված 14. Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասում «բնապահպանական գլխավոր պետական տեսուչը կամ նրա հանձնարարությամբ տարածքային բնապահպանական ավագ պետական տեսուչը» բառերը փոխարինել «բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը կամ նրա հանձնարարությամբ տարածքային բնապահպանության տեսուչը» բառերով:

Հոդված 15. Օրենքի 27-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ, ինչպես նաև սույն հոդվածով սահմանված որոշումներ (այսուհետ՝ որոշումներ) կայացնելու իրավասություն ունեն Հայաստանի Հանրպետության բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը, բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական

մարմնի տարածքային ստորաբաժանման ղեկավարը՝ տեսչական մարմնի ղեկավարի սահմանած դեպքերում և կարգով:».

2) 7-րդ մասում «սահմանում է լիազոր մարմնի ղեկավարը» բառերը փոխարինել «հաստատում է բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը» բառերով:

Հոդված 16. Օրենքի 28-րդ հոդվածի3-րդ մասի 7-րդ կետում «լիազոր մարմնի ղեկավարը» և «Հայաստանի Հանրապետության բնապահպանական գլխավոր պետական տեսուչը» բառերը փոխարինել «բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը» բառերով, իսկ 4-րդ մասում «լիազոր» բառը փոխարինել ?բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական? բառերով :

Հոդված 17. Օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասում «լիազոր մարմնի ղեկավարը» բառերը փոխարինել «բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը» բառերով:

Հոդված 18. Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասում «լիազոր մարմինը» բառերը փոխարինել «բնապահպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը» բառերով:

Հոդված 19. Օրենքի 31-րդ հոդվածի՝

1) 1-ին և 2-րդ մասերի «ա» կետերն ուժը կորցրած ճանաչել.

2) 1-ին և 2-րդ մասերի «գ» կետերը «կենսառեսուրսների» բառից հետո լրացնել «, օգտակար հանածոների» բառերով:

Հոդված 20. Օրենքի 32-րդ հոդվածի.

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի տեսուչի գործողությունները կարող են բողոքարկել «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»,

2) 3-րդ և 4-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 21. Օրենքի 35-րդ և 36-րդ հոդվածների 4-րդ մասերում «լիազոր մարմնի» բառերը փոխարինել «բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի» բառերով:

Հոդված 22. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2018 թվականի փետրվարի 8-ի նիստում առաջին ընթերցմամբ ընդունված Կ-234 -22.12.2017-ՏՏԳԲ-011/0 «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», Կ-234[1] -22.12.2017-ՏՏԳԲ-011/0, «Բնապահպանական իրավախախտումների հետեւանքով կենդանական եւ բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», Կ-234[2] -22.12.2017-ՏՏԳԲ-011/0, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», Կ-234[3] -22.12.2017-ՏՏԳԲ-011/0 «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

№	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկության բովանդակությունը	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**«Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ**				
1.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդված 1-ին կետ	2-րդ հոդվածի 1-ին մասում «ընդերքաօգտագործման» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «համար» բառը՝ նկատի ունենալով «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի դրույթները:	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	16.03.2018թ. ստացել է հանձնաժողովի դրական եզրակացություն

2.	ՀՀ կառավարություն	9-րդ հոդված	Նախագծի 9-րդ հոդվածում «հետևյալ բովանդակությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հետևյալ խմբագրությամբ» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի դրույթները:	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	16.03.2018թ. ստացել է հանձնաժողովի դրական եզրակացություն
3.	ՀՀ կառավարություն	10-րդ հոդված	Նախագծի 10-րդ հոդվածում «տեղակալին»» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «բառերով» բառը՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջները	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	16.03.2018թ. ստացել է հանձնաժողովի դրական եզրակացություն
4.	ՀՀ կառավարություն	11-րդ հոդված	Նախագծի 11-րդ հոդվածն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախատեսվող փոփոխությունները չեն համապատասխանում «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ կետի գործող տեսքին: /Հիշյալ կետում փոփոխություններ են կատարվել 2017 թվականի դեկտեմբերի 21-ի ՀՕ-270-Ն օրենքով/:	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	16.03.2018թ. ստացել է հանձնաժողովի դրական եզրակացություն
2. «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ					
			«Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության		

			օրենքի նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:		
3. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ					
1.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդված	2-րդ հոդվածում «տեքստում» բառից հետո «վերահսկողություն» բառն անհրաժեշտ է փոխարինել «հսկողություն» բառով՝ նկատի ունենալով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 242 ^{2}–րդ հոդվածի դրույթները	Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 242 ^{2}–րդ հոդվածի տեքստում ամրագրված է «վերահսկողություն» բառը	
4. «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ					
1.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդված 2-րդ կետ	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասում «հետևյալ բովանդակությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հետևյալ խմբագրությամբ» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի դրույթները	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	16.03.2018թ. ստացել է հանձնաժողովի դրական եզրակացություն